ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/541/2024-2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հունվարի 13-ին, քննելով Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի նախկին պետ (ներկայումս՝ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության ՀՈԳՎ Արաբկիրի բաժնի պետ) Ռուբեն Կամոյի Ներսիսյանի ընտանիքի անդամ Արուսյակ Անաստասի Ներսիսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2023 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/541/2024-2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի նախկին պետ (ներկայումս՝ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության ՀՈԳՎ Արաբկիրի բաժնի պետ) Ռուբեն Կամոյի

Ներսիսյանի ընտանիքի անդամ Արուսյակ Անաստասի Ներսիսյանի 2023 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունիսի 24-ի թիվ 01/1939/246-2024 գրությամբ Արուսյակ Անաստասի Ներսիսյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում վերջինս նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 10:45-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար:

1.3 2024 թվականի հուլիսի 29-ին կազմվել է թիվ ՎԻՎ/371/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 01/3792-2024 գրությամբ Արուսյակ Անաստասի Ներսիսյանին է ուղարկվել 2024 թվականի դեկտեմբերի 6-ին՝ ժամը՝ 16:20-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր, որին ի պատասխան՝ 2024 թվականի դեկտեմբերի 30-ին Հանձնաժողով է մուտքագրվել հետադարձ ծրարը «մահացած» նշագրումով:

1.5 2024 թվականի դեկտեմբերի 5-ին վարույթի մասնակցի որդու՝ Ռուբեն Կամոյի Ներսիսյանի կողմից հեռախոսազանգի միջոցով ներկայացվել է գործի քննությունը մինչև 2025 թվականի հունվարի 13-ը հետաձգելու մասին բանավոր խնդրանք՝ միաժամանակ հայտնելով, որ իր մայրը՝ Արուսյակ Անաստասի Ներսիսյանը մահացած է: Ռուբեն Ներսիսյանը խնդրել է հնարավորություն ընձեռել՝ Հանձնաժողով ներկայացնելու անհրաժեշտ լրացուցիչ ապացույց իր ընտանիքի անդամ Արուսյակ Անաստասի Ներսիսյանի մահացած լինելու վերաբերյալ, որը հնարավոր կլինի ներկայացնել մինչև 2025 թվականի հունվարի 13-ը:

1.6 Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը բավարարել է վարույթի մասնակցի միջնորդությունը և հետաձգել է գործի քննությունը՝ նշանակելով 2025 թվականի հունվարի 13-ին՝ ժամը 15:30-ին:

1.7 2024 թվականի դեկտեմբերի 25-ին Ռուբեն Կամոյի Ներսիսյանի կողմից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ուղարկվել ՀՀ ԱՆ Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ [redacted] մահվան մասին բժշկական վկայականից քաղվածք, համաձայն որի՝ Արուսյակ Անաստասի Ներսիսյանը մահացել է 29.06.2020 թվականին:

1.8 2025 թվականի հունվարի 13-ին, ժամը՝ 15:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II.Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի դեկտեմբերի 25-ին Արուսյակ Անաստասի Ներսիսյանի ընտանիքի անդամ Ռուբեն Կամոյի Ներսիսյանի կողմից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ուղարկվել ՀՀ ԱՆ Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ [redacted] մահվան մասին բժշկական վկայականից քաղվածք, համաձայն որի՝ Արուսյակ Անաստասի Ներսիսյանը 29.06.2020 թվականին մահացել է:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/541/2024-2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 ՀՀ ԱՆ Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ [redacted] քաղվածքի համաձայն՝ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի նախկին պետ (ներկայումս՝ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության ՀՈԳՎ Արաբկիրի բաժնի պետ) Ռուբեն Կամոյի Ներսիսյանի ընտանիքի անդամ Արուսյակ Անաստասի Ներսիսյանը 29.06.2020 թվականին մահացել է:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.4 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.5 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.6 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.8 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

4.9 Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված հանգամանքի առկայության դեպքում, այն է՝ ***այն անձի մահը, որի նկատմամբ սկսված է եղել գործի վարույթը:***:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

2024 թվականի դեկտեմբերի 25-ին Արուսյակ Անաստասի Ներսիսյանի ընտանիքի անդամ (որդի) Ռուբեն Կամոյի Ներսիսյանի կողմից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ուղարկվել ՀՀ ԱՆ Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ [redacted] մահվան մասին բժշկական վկայականից քաղվածք, որի համաձայն՝ Արուսյակ Անաստասի Ներսիսյանը, որի նկատմամբ սկսված է եղել գործի վարույթը, 29.06.2020 թվականին մահացել է:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարճել ՎԻՎ/541/2024-2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը՝ անձի մահվան հիմքով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ